

Հ. Ս. ՄԵԼՔՈՆԾԱՆ

Լայն է Պ. Սևակի գիտական հետաքրքրությունների ոլորտը: Նրա հարուստ ժառանգության մեջ անգնահատելի արժեք ունեն լեզվագիտական բրնուլթի ստեղծագործությունները, ելույթները, որոնք բազմազան են ու բազմաբնույթ՝ վկայելով հեղինակի գիտական կարողությունների խորությունը, քաղաքացիական պարտքի բարձր զգացողությունը:

Սույն հոդվածում առաջին անգամ իր ամբողջության մեջ ուսումնասիրության առարկա է դառնում բանաստեղծի ժառանգության հենց այդ մասը՝ լեզվին վերաբերող գիտական, գիտահրապարակախոսական ստեղծագործությունները, այլ աշխատություններում տեղ գտած համապատասխան մտքերը, ասույթները:

Լեզուն Պ. Սևակին հետաքրքրում էր հիմնականում երկու կողմով՝ նախ, ինչ դեր ունի դա ժողովրդի ճակատագրի հարցում, և ապա, լեզուն որպես գեղարվեստական մտածողության միջոց և արտահայտություն:

Նախ առաջինի մասին: Կասկածից դուրս է մասնավորապես փոքրաթիվ ժողովուրդների գոյատևման գործում լեզվի ունեցած դերի կարևորությունը: Բժվում է, թե, իբրև անառարկելի ճշմարտություն, դա շալտի էլ դառնար քրնհարկումների, առավել ևս տաք բանավեճերի առարկա: Բայց խորհրդային Միության մեջ ազգային լեզուների հանդեպ վարվող քաղաքականությունը լուրջ մտահոգություն էր պատճառում առաջադեմ մտավորականությանը: Զրնայած ժամանակի գրաքննական արգելքներին, Պ. Սևակը հանդես էր գալիս հանուն մայրենի լեզվի անարգել զարգացման՝ լեզուն դիտելով որպես ժողովրդի գոյատևման թերևս ամենակարևոր գործոն: «Ժողովուրդները գոյատևում են,— գրում է Պ. Սևակը,— ոչ միայն իրենց հողով, այլև իրենց լեզվով, երբեմն ավելի իրենց լեզվով, քան նույնիսկ հողով»¹: Այդ հարցի ավելի հանգամանալի արծարծմանն անդրադառնալով Մաշտոցի պատմական դերի բացահայտման կապակցությամբ՝ Սևակն այն միտքն է ընդգծում, որ լեզուն ազգապահպանման իր դերը կատարում է ոչ թե ինքնին, այլ իբրև ազգային մշակույթի ու գիտության զարգացման, ազգային ինքնագիտակցության խորացման ամենահուսալի խթան: «Անհամեմատ ուժեղ ու գիշատիչ թշնամիներին կեր շղառնալու, նրանց դիմադրելու մի զենք էր մնում. «Ճանաչել դիմաստութիւն և գխրատ, իմանալ զբանս հանճարոյ»,— մարմնական ուժի դեմ դնել հոգեկան զորությունը, ահոելի բազուկի դեմ՝ հուժկու միտքը, համընդհանրության դեմ՝ ինքնությունը...» (5, 175): Ի՞նչ է մասնավորապես «համընդհանրություն» ասվածը: Դրա պատասխանն այսպես է տրված. «Աշխար-

¹ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, Երևան, 1974, հ. 5, էջ 175: Այս հրատարակությունից հետագա մեջբերումների աղբյուրը կտրվի շարադրանքի մեջ, փակագծերում նախ նշելով հատորը, ապա՝ էջը:

հակալներն իրենց հարևաններին ձուլում են ոչ միայն մեծությամբ ու զորությամբ, այլ նաև այն համընդհանուր-ընդհանրացնող զաղափարով, որ տարածում են այդ աշխարհակալությունները» (5, 167): Այդ վտանգավոր երեվույթի դեմ պայքարը, որ հավասարազոր էր ազգային ինքնության պահպանմանը, մեզ համար կարող էր իրացվել միայն հոգևոր մաքառումով, ինչը և դերազանց սկսեց և հետագա հարատևման կարողությամբ լիցքավորեց Մաշտոցը՝ մեր արդեն փլուզված պետականության տեղ ստեղծելով «հոգեկան պետություն...» (5, 177): Մայրենին սովորական հաղորդակցման միջոցից վերաճում դառնում է հարազատ ժողովրդի հարատևման վճռական գործոն, «հոգեկան պետություն», զենք ու զինամթերք այն դեպքում միայն, երբ հանդես է գալիս որպես մեր մտքի ու հոգու սնխափան, հատու և ճկուն գործիք: Ի դեպ, այդ ճկունության մասին: Ինչպես բազմաթիվ այլ դեպքերում, այդ հարցում էլ Պ. Սևակը խնդրին միանգամայն ինքնատիպ լուծում է տալիս: Ի տարբերություն այն կարծիքի, թե լեզվի հարստությունը պայմանավորված է բառապաշարի հարստությամբ, Սևակն այլ բան է պնդում. «Որևէ լեզվի հարուստ կամ աղքատ լինելը որոշվում է ոչ այնքան նրա բառապաշարի հարստությամբ, որքան լեզվի ճկունությամբ» (5, 64) (ընդգծումն իրենն է): Իսկ ինչո՞վ է ապահովվում այդ ճկունությունը, որը լեզվի հարստության արտահայտություն լինելով, նաև դրա հարատևման գրավականն է: Լեզուն ճշկուն կարող է լինել ազատ, անարգել գործածությամբ, այլ ձևով ասած՝ իր բոլոր գործառույթներով, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում հանդես դալու շնորհիվ: Ոչ միայն գեղարվեստական գրականության մեջ, դպրոցում, ռազմ-հեռուստատեսային հաղորդումներում, այլև գիտության տարրեր ճյուղերում, պետական-պաշտոնական գործունեության ոլորտում և այլն:

Կամենայով ընդգծել, թե ինչ հանգամանքներ կարող են լուրջ բացասական հետևանքներ ունենալ լեզվի զարգացման գործում, Պ. Սևակը մեր ուշադրությունը բևեռում է դրանցից երկուսի վրա, որոնք են՝ օտար ազդեցությունը և լեզվի գրքայնացումը: Նրան քաջ հայտնի էր, որ չկա շատ թե քիչ զարգացած լեզու, որ իր պատմական զարգացման ընթացքում զերծ մնացած լինի օտար փոխառությունից: Բայց փոխառությունն ըստ անհրաժեշտության պիտի լինի: Այլապես օտար ազդեցությունը հարվածում է լեզվի ներքին օրինաչափությունների բնականոն զարգացմանը, ջլատում է նրա կենսական ուժերը, աստիճանաբար, բայց վտանգավոր հետևողականությամբ խորթացնում է լեզուն իր կրող ժողովրդին: Պ. Սևակը մայրենիի անաղարտության, բնականոն զարգացման հարցերին անդրադարձել է բազմաթիվ անգամ՝ մասնավորապես դրանց նվիրելով երկու ամբողջական և հասարակայնության տարրեր խավերի մեջ լայն արձագանք գտած հոդվածներ («Պահպանենք և հարստացնենք մայրենին», «Բաց նամակ «... բառարանը» կազմողներին»): Այդ հոդվածների, մասնավորապես առաջինի շահագրգռությունների ոլորտն ավելի լայն է, քան արհեստականորեն բավական երկար ժամանակ մեր շուրթերին սոսնձած մի քանի բառերին (կոնստիտուցիա, ռուսացիա, ռեսպուբլիկա և այլն) վերաբերող ելույթներին արձագանքելը: 60-ական թթ. ազգային լեզուների զարգացման հարցերը բուռն հետաքրքրության առարկա էին դարձել, միութենական և ազգային հանրապետությունների մամուլում ծավալված բանավեճերում, համապատասխան խորհրդակցություններում հանդես եկածների մեջ կային այնպիսիները, որոնք կանխագուշակում էին ազգային լեզուների վերացում, ումանք ավելի շտապելով անհրաժեշտ էին համարում վարչարարական եղանակով ամեն կերպ նպաստել ազգային լեզուների ձուլմանը՝ պահանջելով վերջիններիս դոնորը լայնորեն բացել օտարաբանությունների առջև: Այդպիսի ձախլիկ, բնականաբար հասարակական համակրություն չվայելող մտայնու-

Թյան դեմ հանդես գալով, Պ. Սևակը կրթությունը հիմնավորում է օտար ազդեցությունների սահմանափակման անհրաժեշտությունը: «Օտար բառերի կիրառման խնդրում ամենից ավելի պիտի գործի կշռադատության օրենքը և ոչ երբեք օրենքը թույլ դիմադրության կամ ինքնահոսի» (5, 149): Պիտի փոխ առնվի այն, ինչ պակասում է վերցնողին, ինչի կարիքն զգում է նա: Ըթե այդ սկզբունքով առաջնորդվեին, եթե գործեր կշռադատության օրենքը, ապա, իսկապես, ինչո՞ւ պիտի մեր լեզվում տեղ տրված լիներ այնպիսի բառերի, ինչպիսիք են պարկ («զրոսայդի»), ցեխ («արտադրամաս»): «Թուր կարո՞ղ էր,— շարունակում է Սևակը,— փոխ առնել այդ բառերը, եթե դրանք նույնանիշ (իմա՛ համանուն) լինեին «МЕШОК» և «ГРЯЗЬ» բառերին» (5, 149):

Ավելի անհանդուրժելի է, երբ օտար բացասական ազդեցությունն զգացվում է լեզվի նաև քերականական կառուցվածքի վրա: «Բանն այնտեղ է հասել, որ ազավաղվում է մեր լեզվի շարահյուսությունն անգամ: Վայ-գրողների ու վայ-լրագրողների մեղքով մեր արդի գրականության մեջ վխտում են օտար բառերի հետ նաև օտարաբանություններ, սխալ և օտար խնդրառություն, սրբիալ (և օտար) համաձայնություն, մեր շաղկապների նրբիմացության անգիտում կամ թերացում, իսկական և անիսկական կապերի գիտակցման այնպիսի մթազնում, որ հավասարվում է բացառք կուրության...» (5, 154): Ինչպես այլ դեպքերում, այստեղ ևս Սևակի դիտողությունները խարսխված են բազմաթիվ՝ ամեն մի առարկություն կանխող փաստերի վրա: «Մեզանից ոմանք,— շարունակում է Սևակը,— իրենց ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքի մեջ գոհ են լինում իրենցով, նվագում են ջութակի վրա, երգում են իրենց մասին, գլխարկ են հագնում, ինչպես նաև ակնոցներ, գտնվում են իրենց մոտ, ստիպված տանն են փակվում ցեխի շնորհիվ, իսկ դուրս գալիս՝ շրջում են փողոցի վրա...» (ն. տ.): Մայրենի լեզվի ծով հարստությունից «կեսբուռ օգտվելը», անհարկի օտարաբանությունների դիմելը Սևակը որակում է որպես «կամավոր մուրացիկություն» (5, 154): Իսկ մուրացիկության մյուս կողմը այլ բան չէ, քան արժանապատվության զգացումի պակաս կամ խապառ շգոյություն: Դրանց հետ սերտորեն առնչվող հանգամանքներից մեկը ազգիտությունն է: Սևակը սուր պայքար է մղում այն արատավոր մտայնության դեմ, թե օտար բառ գործածելը կիրթ լինելու, զարգացածության նշան է: Ըմանք «խելոքի տպավորություն» թողնելու նպատակով գեղագիտության փոխարեն գործածում են էսքետիկա, ֆնարեբզության փոխարեն՝ լիբիկա, մենախոսության փոխարեն՝ մոնոլոգ, հույզի փոխարեն՝ էմոցիա, գլխավորի փոխարեն՝ կարդինալ, սկզբունքի փոխարեն՝ պրինցիպ, առաջադիմականի փոխարեն՝ պրոգրեսիվ և այլն, և այլն: Այսպիսի բառագործածությունը Սևակը դիտում է որպես «տգիտություն, կիսագրագիտություն, մտավոր խեղճություն, որովհետև որևէ լեզվով քիչ թե շատ կարգին (ուրեմն՝ նաև մաքուր) խոսել չկարողանալը այլ բան չի նշանակում» (5, 151):

Օտար բառերի անտեղի գործածությունն այս կամ այն անհատի կամ հասարակական խավի կողմից դեռևս շարիք է, ո՞չ աղետ: Աղետալին այն է, երբ առանց անհրաժեշտության մեկ-երկու անգամ գործածված և նույնիսկ չգործածված օտար բառերը մտցվում են բառարանների մեջ՝ դրանով կամենալով արժանացնել քաղաքացիության իրավունքի: Ահա թե ինչո՞ւ Պ. Սևակն այնքան անողոք քննադատության պիտի ենթարկեր «Հայ-ուսերեն բառարանը», մի փոքրածավալ բառարան, որի միայն «կ» տառի տակ տեղ էին գտել հարյուրավոր այսպիսի բառեր՝ կալամիտ, կալոմել, կակադու, կապտած, կենաֆ, կնրատին, կոլեր, կոնգրեզացիա, կամիլավկա և այլն, և այլն (5, 93): «Բառարանի, այն էլ համառոտ մի բառարանի մեջ իրար վրա պարսավորել այնպիսի օտարազգի բառեր, որոնք կամ բնավ գործածական չեն,

կամ ունեն իրենց հայացի ձևերը, կամ գործածական են միայն նեղ մասնագիտական գրականության մեջ՝ նշանակում է զբաղվել աչքակապություն» (5, 95): Պետք է ավելացնել, որ այս կարծիքը ժամանակին համընդհանուր ճանաչման արժանացավ և հիմնականում հաշվի է առնվել նաև 1984 թ. լույս տեսած «Հայ-ուսերեն բառարանում»:

Ժողովրդի և նրա լեզվի միջև առաջացող վտանգավոր խզման պատճառ կարող է դառնալ ոչ միայն օտար ազդեցությունը, այլև խոսքի գրքայնացումն սոհասարակ: Վերջինիս պատճառները կարող են բազմազան լինել, բայց Սեւակն առանձնապես վտանգավոր է համարում այն իրողությունը, երբ խոսքի կառուցման ժամանակ անհրաժեշտ շափով հոգ չի տարվում ժողովրդական մտածողությունն առանձնապես հարազատորեն արտահայտող լեզվամիջոցների օգտագործման ուղղությամբ: Դրա հետևանքն այն է լինում, որ գնալով հյուսիսը կլուծվում է լեզուն, իրենց ավելի են զգալ տալիս կաղապարը, արտայտման «գազեթային միջոցները»: Այդ ամենի դեմ պայքարելու ուղիներ որոնելիս Պ. Սևակը որդեգրում և զարգացնում է լեզվի ժողովրդայնացման թումանյանական գաղափարները: Իրավացիորեն դժգոհելով, որ շատերը գրական լեզվի բավական նեղ, անձուկ ըմբռնում ունեն, ըստ որի՝ ինչ որ ժողովրդի մտածողությանը հարազատ է, այն բարբառային է և գրականից դուրս սիտի մնա, ցավով ընդգծելով, որ մեր գրողներից շատերը քիչ են օգտվում հայոց բառ ու բանից, «խրտնում են ժողովրդական լեզվից» (5, 64), Պ. Սևակն ավելացնում է. «Կարող են ինձ հասկանալ այնպես, թե ես պահանջում եմ մեր գրական լեզվի դոնները բացել ժողովրդականի առաջ» (5, 66): Թվում է, թե Սևակը ժողովրդական խոսքի առջև գրական լեզվի դոնները բանալու հարցում (որն իբրև պրոբլեմ միանգամայն թումանյանական է) բացասական վերաբերմունք պիտի դրսևորեր: Այնինչ լեզվի ժողովրդայնացման թումանյանական տեսության անկյունաքարը հանդիսացող այդ խնդրում նա ուղղակիորեն արձագանքում է Թումանյանին՝ վերը բերված տողերին ավելացնելով հետևյալը. «Եթե պահանջելու իրավունք ունեմ՝ այո՛, պահանջում եմ, և այսպես հասկացվելուց բնավ չեմ ցավի» (5, 66): Ամեն ինչ պարզ է. Սևակն էլ Թումանյանի նման այն համոզմանն է, որ, եթե չի ցանկանում ժողովրդից խորթանալ, գրական լեզուն պիտի զարգանա ժողովրդական կենդանի խոսքի հիմքի վրա և դրա հունով: Պ. Սևակը անդրադառնում է Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանին»՝ այդքան կարևորություն տալով դրա ընդգրկած ժողովրդական լեզվամիջոցների օգտագործմանը՝ մայրենի լեզվին հարազատ շունչ ու ոգի հաղորդելու նպատակով: Իրավացիորեն նշելով, որ գրաբարյան, գրքային բառապաշարն ամփոփող «Հայկազյան բառարանը» ավելի է կիրարկվել մեր գրականության մեջ, քան Ս. Ամատունու ժողովրդական բառն ու բանը պարունակող բառարանը, Սևակն անհանդուրժելի է համարում նման լեզվաքինարարությունը: «Իսկ ինչո՞վ «Բառ ու բանը» հայոց լեզու չէ. ինչո՞ւ նա պիտի գրական լեզու չդառնա — ի՞նչ օրենքով, ի՞նչ տրամաբանությամբ, ապագայի ի՞նչ հեռանկարով» (5, 65): Սևակն աղաղակ-բողոքներով է արտահայտում այն, ինչ Թումանյանը դեռևս հույս ունենալով, թե իր ցանկացած իրականանալու է, ավելի մեղմ տոնով է ասում. «Առանց էդ տեսակ աշխատանքների (նկատի ունի «Հայոց բառ ու բանը» — Ն. Մ.) անկարելի է ստեղծել մեր գրական լեզուն...»²:

Պ. Սևակի լեզվաբանական բնույթի մյուս դատողություններն ու մտքերը վերաբերում են գրական լեզվի հիմնական տարբերակային ձևերից մեկին՝ գեղարվեստական լեզվին: Այս դեպքում բանաստեղծի լեզվաշինարարական,

² Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, 1947 թ. 5, էջ 383:

ինչպես և գրականագիտական գործունեության բովանդակությունը պայմանավորող հիմնական հանգամանքներից մեկն այն էր, որ նա մեր բազմադարյան գրականության մեջ զարգացման նոր փուլ էր նշանավորում, գրական նոր հոսանք էր առաջ բերում: Որպես այդպիսին, նա ոչ միայն գործնականորեն՝ իր գեղարվեստական գործունեությամբ, այլև տեսականորեն հիմնավորում էր նոր գրական սերնդի դավանանքը և սկզբունքները, հարթում այն ճանապարհը, որով ընթանալու էր այդ սերունդը: Երբ անհատի պաշտամունքի քննադատության շնորհիվ ստեղծված մթնոլորտում, քննադատական ոգու ուժեղացման պայմաններում Պ. Սևակն աննախադեպ ոգևորությամբ և ավյունով ծավալում էր գեղարվեստական և լեզվաշինարարական գործունեություն, խորհրդահայ գեղարվեստական գրականության լեզվի վիճակն այնքան մխիթարական չէր: Բանաստեղծության թեմատիկայի նկատելի սահմանափակումը, կյանքն իր բարդությունների մեջ գեղարվեստորեն վերարտադրելու փոխարեն և դրա հաշվին գովասանական բնույթի արծարծումները ոչ միայն նկատելիորեն աղքատացրել էին գեղարվեստական ստեղծագործության բովանդակությունը, այլև պատճառ դարձել, որ բանաստեղծական խոսքը նույնպես օժտվեր միօրինակությամբ, կաղապարայնությամբ, զրկվեր «կշռից ու արժեքից»: «Այդ բանաստեղծությունը,— գրում է Սևակը,— սարքվում էր մի քանի տասնյակ բառերից, որպիսիք էին վե սու և վեսմը, սեգ ու գոռը, բուր ու բուսուրը, սուր ու սուրազանը, ապա նաև՝ ծիածան ու ծիածաղխիտ, լուսե ու խանդակաք, և այլն, և այլն, բառեր ու նրանցից կազմված արտահայտություններ, որոնք վաղուց դադարել էին կշիռ ու արժեք ունենալուց...» (5, 407): Դա, Չարենցի արտահայտությամբ, «թովռուն խոսքի»³ պոեզիա էր, իսկ Սևակի արտահայտությամբ՝ «փուշ ու ճոճան, գանգրահեր և ուռուցիկ բառերի ոտանավորություն» (5, 407): Սևակը, որ լեզուն ոչ միայն բովանդակության արտահայտման միջոց էր համարում, այլև դրա (բովանդակության) ինքնատիպ արտացոլում, չէր կարող չտեսնել, որ մանր, ճղճիմ հույզերը, աղքատիկ մտքերը բանաստեղծության մեջ այլ տեսքով չեն կարող հանդես գալ, քան «բառերի բազրգանությամբ» (5, 291), զարդարուն խոսքով: «Ինչքան աղքատ է միտքն ու զգացումը՝ նույնքան պերճ ու սիրուն են դառնում բառերը. ինչքան մանր ու ճղճիմ են հույզերն ու խոհը՝ այնքան ծաղկուն է դառնում խոսքը» (5, 189—190): Պ. Սևակը մասամբ զոհ չէր նաև իր ժամանակակիցների բառագործածությունից: Նրանք էլ «հոգնած երեկվա հանգավոր ու շափավոր կաղապարվածությունից, քափ ու փրփուրի շափաբերականից, գանգրահեր բառերի վաճառականությունից, հաճախ գրում են մի այնպիսի լեզվով, ասես հարկադրաբար հարկ ու տուրք են տալիս՝ իրենց մտքերն արտահայտելով մի կերպ, զոռով, կարծես թե օտար մի լեզվով» (5, 257) (ընդգծումը հեղինակինն է): Գեղարվեստական գրականության լեզվի հարցերում Պ. Սևակը գուցե առանձին դեպքերում շափազանց խստապահանջ է արտահայտվում: Նա այլ կերպ չէր կարող վարվել, որովհետև կարևորելով բառի կշիռն ու արժեքը, դրանով այլ բան չէր պահանջում, քան գեղարվեստական ստեղծագործության բովանդակության հարստություն, խորք, հասարակական հնչելություն: Դա ձևի ու բովանդակության ներդաշնակության, համապատասխանության հանրահայտ դրույթի կրքոտ պաշտպանություն էր, անբեկանելի պահանջ դրա հետևողական կիրառության:

Ամենահիմնական դրսևորումով ինչպե՞ս էր ըմբռնում Պ. Սևակը գրող — բառ հարաբերությունը: Այդ հարցին նա տալիս է այնպիսի պատասխան, ինչպիսին կարող էր տալ միայն նա, ով իր մտքերը քաղում է ոչ միայն այս

³ Ե. Չարենց, Երկերի ժողովածու, 1968, Բ. 4, էջ 17:

կամ այն տեսութիւնից կամ տեսական աշխատութիւնից, այլև բխեցնում է լեզվամշակման իր հարուստ և ուսանելի փորձից: «Բառն ու բանաստեղծը (յայն առումով՝ գրողը ոխերիմ թշնամիներ են... (5, 190) (ընդգծումը հեղինակինն է): Սա ասված է ոչ թե այնպես, ասելիքն անսովոր ձևով հայտնելու մղումով, այլ Սեակի համար ունեցել է ելակետային նշանակութիւն: Ուշադրավ է, որ մեկ այլ դեպքում նա անդրադառնում է այդ մտքին՝ որպես բանաստեղծի լեզվի գնահատման հիմնական շահանքիչի. «Ս. Կապուտիկյանն այսօր արդեն վարպետ է. բառերն են վախենում նրանից և ոչ թե նա բաներից» (6, 591) (ընդգծումը հեղինակինն է): Բայց ինչպես հասկանալ այդ միտքը, ի՞նչ է նշանակում, թե բառն ու գրողը իրար թշնամի են: «Ամեն բառունի իր գաղտնիքը», — ասում է Պ. Սեակը, որն այլ մտքով շփտի հասկանալ, քան այնպես, թե բառի գաղտնիք կոչվածը բառի արտահայտչականութիւնն է: Իսկ համապատասխան բառն իր անհրաժեշտ արտահայտչականութեամբ գործածելը այնքան դժվար է, որքան դժվար է թշնամուց, այն էլ նույն նպատակով իրեն հետամտող թշնամուց գաղտնիք կորզելը: Ահա թե ինչու բառի ընտրութեան ուղղութեամբ կատարված աշխատանքը, որ հավասարազոր է խոսքի վարպետութեան, Սեակը դիտում է որպես «առնելի թիպարտութիւն» (5, 191): Գրողն ստրուկ-թիպարտից արարիչ է դառնում, երբ պարտութեան է մատնում բառին, այսինքն՝ երբ հաջողվում է բառն իր տեղում գործածել, ենթարկել իրեն, բացահայտել դրա արտահայտչականութիւնը: Այդ պահից արդեն ոխերիմ թշնամիները վերածվում են մերձավորների: Այդպիսի կարծիքի լինելով գրող — բառ հարաբերութեան հարցում, բնականաբար Սեակը պիտի հանգեր հետևյալ ընդհանրացմանը. «Գրողի համար լեզուն ինչ-որ ինքնաբաժվ երևույթ չէ, այլ նրա կան ու չկան: Լեզուն է գրողի գեղագիտութեան և կենսափիլիսոփայութեան ինչպես հիմքը, այնպես էլ առաստաղը» (5, 357): Ակադեմիական ոճով ասված չէ, բանաստեղծական մտածողութեան հետքերը բավական նկատելի են, բայց ասվածը և՛ խորքունի, և՛ գիտական արժեք:

Ընդհանուր բնույթի ճշմարտութիւնների բացահայտումը կամ արժարժումը Սեակի համար էական ոչ մի նշանակութիւն չէին ունենա, եթե դրանք չձառայեցվեր իր ժամանակի գրականութեան, դրա լեզվի ցանկալի հունով դարգացման խնդիրների լուծմանը: Սեակը ո՞րն էր համարում իր և իր ժամանակակիցների լեզվամշակման գործունեութեան հիմնական խնդիրը: Որպես այդպիսին նախ նշում էր պայլաբը հետադարձականութեան դեմ, հանուն խոսքի կատարյալ պատկերավորութեան: Սեակը բանաստեղծի ուժը տեսնում էր պատկերավոր մտածողութեան մեջ: Որտեղ թուլանում է պատկերավոր, բանաստեղծական մտածողութիւնը, այնտեղ հետադարձականութիւնը գլուխ կբարձրացնի և կջանա բանաստեղծին թոցնել իր ետևից (6, 433): Բայց առավել կարևորն այն է, թե ինչպես, ինչ եղանակով է ապահովվելու պատկերավորութիւնը: Այս հարցի պատասխանի մեջ է դրսևորվում սեակյան դատողութիւնների ինքնատիպութիւնը, ժամանակի քնարերգութեան լեզվի մշակման գործում առաջնակարգ խնդիրն ըմբռնելու սեակյան անառարկելի կարողութիւնը: «Պատկերավորութիւն ասածը, — ուսուցանում է Սեակը, — արդեն ուղիղ (ճիշտ, բոլորի կողմից ասված-ընդունված) խոսք չէ, այլ միշտ էլ՝ այսպես ասած՝ շրջված-շուռ տված խոսք» (6, 433): Եվ քանի որ շատ է կարևորութիւն տալիս այս խնդրին, Սեակն անհրաժեշտ է համարում նաև համապատասխան օրինակներով հասկանալի դարձնել իր միտքը: «Օրինակ, դիցուք, հազարավոր վայ-բանաստեղծութիւնների մեջ կարդացել ենք. «Գուրս եմ գալիս, որ կանաչով զմայլվեմ... Իսկ Պ. Սեակը կոչվածն, օրինակ, շըրջում—շուռ է տալիս, переначиват»՝ «խոտի աճման համար հարկ վճարեմ

աչքով» (6, 433): Կամ այլ օրինակ՝ փոխանակ ասելու «ծառերն են շարվել իրար հետևից», շրջումով կասվի՝ «ծառերը մայթերին բազմակետ են դնում» և այլն: Եթե այս ամենն արտահայտելու լինենք այլ ձևով, ապա պետք է ասել, որ Սևակն ընդգծում է փոխաբերության, բառը փոխաբերական նշանակությամբ գործածելու պահանջը: Այդ պահանջի իրականացումով՝ խոսքը հետևողականորեն փոխաբերության վրա խարսխելով, բանաստեղծությունը մեծապես կշահեր մասնավորապես ձանձրույթ պատճառող հոետորականության հաղթահարման իմաստով: Բայց Սևակի ասածն ու պահանջածը նաև այլ բան է նշանակում: Դրա կիրառումով պիտի նորացվեր մեր բանաստեղծական խոսքի արտահայտչականությունը, ղեղարվեստական խոսքի կառուցման սկզբունքները: Բացի հոետորականության շեղբացումից պիտի շահավորվեր նաև «բառական զարդարանքի» կամ «բառական կախարդանքի» նշանակությունը: Պատկերավորության շահերից ելնելով, պիտի շահավորվեր նաև պատկերավորության միջոցների (մակդիր, համեմատություն և այլն) գործածությունը: Բանաստեղծական մտածողության արտահայտման հիմքում դնելով փոխաբերության սկզբունքը՝ դրանով Սևակը ձգտում էր երևույթը խորքով ներկայացնել, ցույց տալ երևույթի, իրերի նաև շերևացող կողմը՝ աստառը:

Բանաստեղծները:

Նրա համար շե՛ն,

Որպեսզի... այսպե՛ս

Ամե՛ն բան շրջեն աստառի վրա... (2, 202):

Երևույթի գեղարվեստական կատարյալ բացահայտման, հարուստ, տարողունակ խոսքի նվաճման համար իրերը երկու կողմով ցույց տալը դեռևս քիչ է: Բառն այնպիսի արվեստով պիտի գործածվի, որ հնարավոր լինի ապահովել խոսքի զուգորդական հնարավորությունների դրսևորումը, որ «եթե բանաստեղծության վերջում վերջակետ էլ դրվի՝ դարձյալ կախման կետի զգացողություն ունենաս» (5, 192): Բառի զուգորդական հնարավորությունների օգտագործումը, ուրեմն, պիտի ծառայի խոսքի բովանդակության խորացմանը: Ժամանակի գրականության հիմնական խնդիրներից մեկը Սևակն այսպես է ձևակերպել՝ արտահայտվելով կիրեննետիկայի լեզվով. «Նվազագույն սեղամասի վրա ստանալ առավելագույն ինֆորմացիա...» (5, 269): Այս մտքի հետ սերտորեն առնչվում է «փլվածքների և կետգծի», կեսխոսքայնության դրույթը: Խ՛նչ է դա: Նշելով, որ իր օրերի հայ բանաստեղծությունն ապրում է «անցման հասակի» ժամանակաշրջան՝ դրա համար բնորոշը հետևյալն է համարում. «Արդի բանաստեղծությունն ինձ պատկերանում է ոչ թե հարթությամբ, այլ փլվածքներով: Եթե փորձենք նկարել նրա հետագիծը, ապա կըստացվի ոչ թե անընդմեջ գիծ, այլ ընդմիջված գիծ՝ այն, ինչ կոչվում է կետ-գիծ...» (5, 268): «Փլվածքի» և «կետգծի» հականիշ հասկացություններն են «հասարակն ու պարզունակը», «ծամծավածն ու տափակը», «պատմողական նկարագրականն ու ավելորդ մանրամասնությունները»: Եթե չլինեին դրանք, այսինքն այն, ինչ կարող է ենթադրվել, ինչ որ կարող է հասկացվել առանց ուղղակիորեն արտահայտելու, կստացվի Սևակի պահանջը՝ «... ոչ թե համատարած հարթություն, այլ հարթություն փլվածքներով» (5, 269): «Փլվածքին» հոմանիշ է «կեսխոսքայնությունը», որքանով դա ևս նշանակում է բանաստեղծական խոսքն ազատել ավելորդ մանրամասնություններից, այդ կառույցի մտերիմների խոսակցության սկզբունքով, մտերիմներ, որոնք իրար հասկանում են կես խոսքից, ակնարկից: «Իրեն հարգող ամեն բանաստեղծ գոնե պիտի այնպես գրի, ինչպես խոսում են ոչ թե օտար կամ անծանոթ մեկի

հետ, այլ ամենամոտիկ ու հարազատ մեկի, այնպիսի մեկի, որ քեզ հասկանում է կեն-խոսքից» (5, 248): Թվում է, թե ամեն ինչ պարզ է: Բայց այդ հարցում նույնպես ժամանակին նրան ճիշտ չեն հասկացել, այս մտքերը ևս վեճեր են հարուցել: Կրկին ու կրկին անդրադառնալով այդ խնդիրների մեկնաբանությանը՝ Սևակն այն միտքն է ընդգծում, որ «ակնարկով ու կես խոսքով» արտահայտվելը հայ գրականության համար նոր երևույթ չէ, և այդ հարցում որպես առավել շահավտ ընդօրինակման արժանի ստեղծագործողների, շիշատակում է Գրիգոր Նարեկացուն, Հ. Թումանյանին (տե՛ս 6, 428):

Այսպիսով, լեզվի խնդիրները Պ. Սևակին հետաքրքրել են որպես ժողովրդի ճակատագրով մտահոգ, մեր բազմադարյան գրականության մեջ զարգացման նոր փուլ նշանավորող բանաստեղծի: Նա պայքարում էր մայրենի լեզվի բնականոն, անաղարտ զարգացման համար: Գեղարվեստական գրականության մեջ բառի «կշիռն ու արժեքը» կարևորում էր իբրև գեղարվեստական ստեղծագործության բովանդակության խորացման ու հարստացման, հասարակական հնչելույթի ու թեղացման հիմնական միջոցի: Հոետորականության, պերճախոսության դեմ Պ. Սևակի մղած անհաշտ պայքարի բուն նպատակն էր խոսքի կատարյալ պատկերավորության, զուգորդական հնարավորությունների լիարժեք դրսևորման, ազդային լեզվամտածողության խորացման ապահովումը գեղարվեստական գրականության մեջ:

Օ. Տ. МЕЛКОНЯН — Языковедческие взгляды Паруйра Севака. — В статье впервые в своей совокупности стала предметом изучения та часть научного, научно-публицистического наследия П. Севака, которая относится к области языка. Толкование П. Севаком общественной роли языка и одного из основных функциональных стилей литературного языка, художественной речи, по своей радикальной заинтересованности и глубокой научности является одной из непреходящих ценностей армянской филологической мысли.